ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԸ ՓԱՍՏԱԲԱՆ ՏԻԳՐԱՆ ԵԳՈՐՅԱՆԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

11.07.2017 16:10

Մի քանի լրատվամիջոցներում հրապարակվել են փաստաբան Տիգրան Եգորյանի պարզաբանումները կապված իր նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի հետ:

Անդրադառնալով այդ պարզաբանումների «Կարգապահական վարույթ հարուցելու հիմնավորվածության հարցը» վերտառությամբ 6-րդ կետին, հարկ ենք համարում արձանագրել, որ փաստաբան Տիգրան Եգորյանը ՀՀ փաստաբանների պալատի նախագահի որոշումից թերի քաղվածքներ կատարելով, այլ կերպ ներկայացնելով փաստերը, փորձել է տպավորություն ստեղծել, որ իր նկատմամբ կայացված՝ կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումն անհիմն է:

Մասնավորապես, Տիգրան Եգորյանը նշել է, որ *«Հիմնադրամի ներկայացուցիչները ոչ մի ապացույց ներկայացրած չեն եղել իրենց՝ կարգապահական բողոքին կից եւ ոչ մի նոր փաստ չեն ներկայացրել փաստաբանների պալատին, առավել ևս՝ դիմումով վկայակոչված փաստերը հիմնավորող որևէ ապացույց (եթե, նույնիսկ պատկերացնենք, որ դա առհասարակ հնարավոր լիներ):*

Ավելին, Արուսյակ Հայրապետյանի եւ Թեհմինե Եոնքյանի ներկայացրած դատողությունները կամ եզրակացությունները չեն բխել Ա. Սարգսյանի մոր և եղբոր հարցազրույցի տեսագրությունից /https://www.youtube.com/watch... և ՀՔԾ-ի 26.12.2016թ. պատասխան գրությունից: Դրանք եղել են անհիմն հայտարարություններ՝ արված գործին չմասնակցող, գործի հետ որեւէ կապ չունեցող մարդկանց կողմից: Այլ խոսքով ասած՝ դրանց հիման վրա հնարավոր չէ դիտարկել փաստաբանի վարքագծի կանոնագրքով նախատեսված պահանջների խախտման հատկանիշների նույնիսկ առերևույթ առկայություն»:
Փաստաբան Տիգրան Եգորյանը նշել է նաև հետևյալը. «Այդուհանդերձ, ՓՊ նախագահը որոշել է հարուցել կարգապահական վարույթ՝ առանց որեւէ ապացույցի առկայության: Ավելին, վարույթի հարուցման որոշմամբ արձանագրվել են «փաստեր», որոնք ուղղակի մտացածին են և կեղծ. «Հիմնադրամի միջնորդությամբ նշանակված դատաբժշկական փորձաքննության արդյունքում պարզվել է, որ Ա. Սարգսյանն ունի ծանր հիվանդություն և վերջինիս նկատմամբ կիրառված կալանավորումը փոխարինվել է ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցով»: Ինչպես նշեցինք, Ա. Սարգսյանի կալանավորումը այլ միջոցով փոխարինվել է, ոչ թե այս հիմնադրամի ներկայացրած դիմումի հիման վրա փորձաքննությամբ, այլ բժշկական կոնսիլիումի եզրակացության:»:

Վերոգրյալի կապակցությամբ ՀՀ փաստաբանների պալատն անհրաժեշտ է համարում ներկայացնել փաստաբան Տիգրան Եգորյանի կարգապահական վարույթ հարուցելու որոշման կայացման նախապատմությունը՝

1. «Ազատություն և Հայրենիք» հիմնադրամի (**այսուհետ՝ Հիմնադրամ**) հոգաբարձուների խորհրդի անդամներ Արուսյակ Հայրապետյանը և Թեհմինե Եոնքյանը Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատին բողոք են ներկայացրել **16.01.2017թ.**:

2. Նշված դիմումը մակագրվել է փաստաբանների պալատի նախագահի առաջին տեղակալ Էմիլ Ամիրխանյանին:

3. **25.01.2017թ.** գրությամբ (**կարգապահական գործ՝ թերթ 2**) փաստաբանների պալատի նախագահի առաջին տեղակալը հիմնադրամի խորհրդի անդամ Արուսյակ Հայրապետյանին առաջարկել է **մինչև 2017 թվականի փետրվարի 02-ը ներառյալ**, ներկայացնել դիմումում նշված փաստերը հաստատող համապատասխան փաստաթղթերը և լրացուցիչ պարզաբանումները:

4. **25.01.2017թ.** մեկ այլ գրությամբ (**կարգապահական գործ՝ թերթ 3**) փաստաբանների պալատի նախագահի առաջին տեղակալը փաստաբան Տիգրան Եգորյանին է ուղարկել հիմնադրամի բողոքի պատճենը և խնդրել է **մինչև 2017 թվականի փետրվարի 02-ը ներառյալ**, ներկայացնել գրավոր բացատրություն դիմումի վերաբերյալ՝ անհրաժեշտության դեպքում կցելով դիմումում նշված փաստերը հերքող համապատասխան փաստաթղթեր:

5. **01.02.2017թ.** ՀՀ փաստաբանների պալատում մուտք է եղել Հիմնադրամի խորհրդի անդամներ Արուսյակ Հայրապետյանի և Թեհմինե Եոնքյանի գրավոր բացատրությունները (**կարգապահական գործ՝ թերթ 4**) և կցված հատուկ քննչական ծառայության գրությունը:

6. **03.02.2017թ.** փաստաբանների պալատում մուտք է եղել փաստաբան Տիգրան Եգորյանի 02.02.2017թ. միջնորդությունը (**կարգապահական գործ՝ թերթ 7**), որով վերջինս խնդրել է հետաձգել բացատրություն տալու համար նախատեսված ժամկետը՝ հնարավորություն տալով վերջինս ներկայացնել գրության ստացման պահից երկշաբաթյա ժամկետում՝ **մինչև 13.02.2017թ.**:

7. Նույն օրը՝ **03.02.2017թ.** փաստաբանների պալատի նախագահի առաջին տեղակալը գրություն է (**կարգապահական գործ՝ թերթ 9**) հղել Տիգրան Եգորյանին, նշելով միջնորդության բավարարման մասին և խնդրել է **մինչև 13.02.2017թ.** ներկայացնել բացատրություններ և ապացույցներ:

8. Փաստաբան Տիգրան Եգորյանը փաստաբանների պալատին որևէ բացատրություն և ապացույց չի ներկայացրել առ 16.02.2017թ.՝ որոշում կայացնելու օրը:

Ավելին, փաստաբան Տիգրան Եգորյանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու մասին փաստաբանների

պալատի նախագահի 16.02.2017 թվականի. որոշման պատճառաբանական մասում հստակ նշվել է հետևյալը `
«- Դիմումում նշված փաստերի հաստատման դեպքում փաստաբան Տիգրան Եգորյանի արարքում կարող են առերևույթ առկա լինել Պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի ... 2.6.1 և 2.7.2 ենթակետերի խախտման հատկանիշներ:» (ընդգծումը մերն է):»:

«- Տվյալ դեպքում Դիմողը նշել է, որ Տիգրան Եգորյանը տեղեկացված լինելով այն մասին, որ իր պաշտպանյալ Արթուր Սարգսյանը տառապել է պատիժը կրելուն խոչընդոտող ծանր հիվանդությամբ, ցուցաբերել է անգործություն, այն է՝ խափանման միջոցը փոխելու ուղղությամբ միջոցներ չի ձեռնարկել։

Ի հավաստումն վերոգրյալի՝ Դիմողը վկայակոչել է Տեսանյութը, ինչպես նաև ՀՀ հատուկ քննչական ծառայության գրությունը, որից բխում է, որ Հիմնադրամի միջնորդությամբ նշանակված դատաբժշկական փորձաքննության արդյունքում պարզվել է, որ Արթուր Սարգսյանն ունի ծանր հիվանդություն, և վերջինիս նկատմամբ կիրառված կալանավորումը փոխարինվել է ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցով:

<u>Դիմումից առերևույթ բխում են հետևյալ փաստերը.</u>
1. Արթուր Սարգսյանը հանդիսանում է փաստաբան Տիգրան Եգորյանի պաշտպանյալը.
2. Արթուր Սարգսյանը 31.07.2016 թվականից գտնվում է կալանքի տակ.
3. Արթուր Սարգսյանը տառապում է պատիժ կրելու (կալանքի) հետ անհամատեղելի ծանր հիվանդությամբ, որը կոչվում է «Բեխտերևի հիվանդություն».
4. Փաստաբան Տիգրան Եգորյանը տեղեկացված է եղել իր պաշտպանյալ Արթուր Սարգսյանի մոտ ծանր հիվանդության առկայության մասին, սակայն օրենքով սահմանված միջոցներ չի ձեռնարկել Արթուր Սարգսյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված կալանավորումը փոխելու ուղղությամբ.»:

«- ***<u>Սույն որոշմամբ կարգապահական վարույթը հարուցվում է՝</u>*** փաստաբան Տիգրան Եգորյանի կողմից իր պաշտպանյալ Արթուր Սարգսյանի քրեական գործով բարեխիղճ իրավական օգնություն ցույց չտալու (ձեռնհասության սկզբունքը խախտելու), ինչպես նաև վստահորդի նպաստավոր շահերից չելնելու վարքագիծը ստուգելու նպատակով:

Միաժամանակ, հարկ է արձանագրել, որ փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելն ինքնին չի նշանակում, որ փաստաբանը թույլ է տվել կարգապահական խախտում և այդ հարցի վերջնական պատասխանը կարող է տրվել միայն կարգապահական վարույթի իրականացման արդյունքում՝ Պալատի խորհրդի համապատասխան որոշմամբ:»:

Վերոնշյալից հետևում է, որ ՀՀ փաստաբանների պալատի նախագահի՝ վարույթ հարուցելու որոշմամբ որևէ փաստ չի հաստատվել, ավելին, արձանագրվել է, որ կարգապահական վարույթը հարուցվում է՝ փաստաբան Տիգրան Եգորյանի կողմից իր պաշտպանյալ Արթուր Սարգսյանի քրեական գործով բարեխիղճ իրավական օգնություն ցույց չտալու (ձեռնհասության սկզբունքը խախտելու), ինչպես նաև վստահորդի նպաստավոր շահերից չելնելու **<u>վարքագիծը ստուգելու նպատակով</u>**: Բացի այդ, նույն որոշմամբ արձանագրվել է, որ վարույթ հարուցելն ինքնին չի կարող վկայել կարգապահական խախտում թույլ տալու մասին:

Օրենքով՝ կարգապահական վարույթ հարուցելու հիմքն է փաստաբանի արարքի մեջ օրենքի կամ փաստաբանի վարքագծի կանոնագրքով նախատեսված պահանջների խախտման հատկանիշների առերևույթ առկայությունը:

Տվյալ դեպքում, դիմող կողմի վկայակոչած փաստերը, որոնք փաստաբան Տիգրան Եգորյանի կողմից վարույթ հարուցելու հարցը քննարկելու փուլում այդպես էլ չհերքվեցին, փաստաբանի վարքագծի կանոնագրքի խախտման առերևույթ հատկանիշներ են պարունակել:

Իրականությանը չի համապատասխանում նաև փաստաբան Տիգրան Եգորյանի պնդումն այն մասին, որ *«Արուսյակ Հայրապետյանի եւ Թեհմինե Ենոքյանի ներկայացրած դատողությունները կամ եզրակացությունները չեն բխել Ա. Սարգսյանի մոր և եղբոր հարցազրույցի տեսագրությունից»*:

Մասնավորապես, նշված տեսագրությամբ Արթուր Սարգսյանի ընտանիքի անդամները հայտարարում են, որ Արթուր Սարգսյանի հիվանդության մասին նրա փաստաբան Տիգրան Եգորյանը տեղեկացվել է ***(հիվանդության մասին փաստող փաստաթուղթը նրան է ներկայացվել)*** դեռևս Արթուր Սարգսյանի ձերբակալությունից 4 օր անց (հայտարարությունը ներկայացվել է www.youtube.com կայքին կատարված հետևյալ հղմամբ՝ https://www.youtube.com/watch?v=t_4NApNycUM, տես՝ 00:35-ից 00:55 վայրկյանը):

Ինչ վերաբերում է այն հարցին, թե արդյո՞ք փաստաբան Տիգրան Եգորյանը թույլ է տվել կարգապահական խախտում, թե՝ ոչ, ապա այդ հարցի որոշման իրավասությունը պատկանում է ՀՀ փաստաբանների պալատի խորհրդին:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
աշխատակազմ

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })